ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 19-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» պայմանագրում 2023 թվականի օգոստոսի 14-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Կապալառուի առաջարկության առկայությամբ պայմանավորված՝ աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 1.3 կետով նախատեսված և «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Աշխատանքների կատարման ավարտը» սյունակում նշված «45 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարիվել են «60 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

19.04.2023թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 14 » օգոստոսի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալ-Սան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ջ. Օսեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 19.04.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի 1.3 կետով նախատեսված և «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Աշխատանքների կատարման ավարտը» սյունակում նշված «45 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «60 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 ՀՎՀՀ՝ 02583241 Հ/Հ՝ 900011192151 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	***«Ալ-Սան» ՍՊԸ*** Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի Երևանյան-8 /14 ՀՎՀՀ՝ 08423932 Հ/Հ՝ 163218040794 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Մետաքս» մ/ճ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	**Տնօրեն՝ Ջ. Օսեյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.